

ԵՐԵՍՈՒՆ ՏՍՐԻ ԱՌԱՋ

Ս. ՅԱԿՈԲ ԵՒ ՎԱՏԻԿԱՆ

Վատիկանի Մատենադարանին Արևելեան Բաժնին Մատենադարանապետը՝ Մօնսինեօր Թիսըրան 1923ի Յուլիոսին այցելած էր Ա.մհն. Ս. Պատրիարք Հօր և այդ առթիւ հետաքրքրուած էր տեսնել Ս. Յակոբի տպարանը և Ձեռագրաց Մատենադարանը, որ հաստատուած է Ս. Թորոս եկեղեցւոյն մէջ, հուրի և ջուրի անթափանցելի ապահով շէնք մը:

Յարգելի Մատենադարանապետը հրացած է Հայ Ձեռագիրներու այս ճոխ հաւաքածուն վրայ, և միւս կողմէն փափաք յայտնած է գնել Ս. Յակոբի Տպարանէն լոյս տեսած գիրքերէն Վատիկանի Մատենադարանին համար: Ս. Պատրիարք Հայրը իմանալով ասիկա, ուզուած հատորները նուիրած է Վատիկանի Մատենադարանին:

Մօնսինեօր Թիսըրան, Հոռոմ վերադարձին, Երուսաղէմի Հայոց Պատրիարքին այս նուիրատուութիւնը կը տեղեկացնէ Սրբազան Քահանայապետին, որ ի նշան իր գոհունակութեան Ս. Յակոբի Մատենադարանին կը նուիրէ լուսատիպ օրինակը այն յունարէն Յայտմաւուրքին, որ յատկապէս գրչագրուած է Իււզանգիոնի Հայագրի Վասիլ Բ. Կայսեր (976 - 1025) համար^(*):

Մօնսինեօր Թիսըրան իր տեսակցու-

թեան պահուն յայտնած է Ս. Պատրիարք Հօր թէ սկսած է կազմել Վատիկանի Մատենադարանին մէջ գտնուող Հայերէն Ձեռագիրներուն Մայր Յուցակը:

Յարգելի Մատենադարանապետին այդ գործը, լատիներէնով, լոյս տեսած է Վատիկանի տպարանէն. հոյակապ հրատարակութիւն մը, շքեղ տպագրութեամբ, որմէ օրինակ մը նուէր զբկած է Ա.մհն. Ս. Պատրիարք Հօր, Երուսաղէմի Դոմինիկեան գրտուն Միտրանութիւնէն Հայր Աբելի ձեռքով, իմացնելով միանգամայն թէ այս գործին առաջին երկու օրինակներէն մին Ս. Պապին ներկայացուցած է, իսկ միւսն ալ Դուրեան Ս. Պատրիարքին:

Ն. Ա.մհն. Սրբազնութիւնը պաշտօնագիրով մը իր շնորհակալութիւնը յայտնած է Մօնսինեօր Թիսըրանին:

Մանօք. — Այս ստոյգ տեղեկութիւններով ինքնին կ'ուղղուին վերջերս Հայ թերթերու մէջ Ս. Յակոբի և Վատիկանի յարաբերութեանց մասին տեսնուած արժնդալոյ լուրեր:

(Սիոն, 1928 Փետրուար, էջ 64):

(*) Ինչպէս որ այս Ձեռագրին բնագիրը գլուխ գործոցն է յոյն գրչագրութեան և մանրակարգութեան, նոյնպէս այս լուսատիպն ալ գլուխ գործոց մըն է գեղարուեստական տպագրութեան: Գործին իտալերէն վերնագիրն է Il Menologio di Basilico I I (Cod Vaticanum Greco 1613), տպագր. Torino, Fratelli Bocca-Edizioni, MdeceVII. Այս օրինակը կը կրէ 116 թիւը:

Տրամագրութիւնները բարձրացան, և ուրախութեան ալիքը ծփաց շքեղ սրահին մէջ:

Վարպազատ ոտքի ելաւ գուրս երթալու, իբր թէ բնական պէտքի համար:

Սա կանխաւ որոշուած գաղտնի նշանն էր:

Տասներկու մարդիկ ինկան Մուշեղի վրայ, և անոր թևերը բռնելով զինք անշարժութեան մատնեցին:

Մուշեղ զայրացած, ոտքի վրայ կեցող թագաւորին հարցուց. «Այս ինչո՞ւ համար է»:

Վարպազատ՝ գէպի գուռը յառաջանալով, պատասխանեց անգոսանօք. «Գնա Պապ թագաւորի մօտ, անոր հարցուր և կ'իմանաս թէ ինչո՞ւ համար է»⁽³⁾:

Մուշեղ Մամիկոնեան իր գլխովը վճարեց Պապ Արշակունիին ունեցած պարտքը:

Մինչ տասներկու հոգի Մուշեղի թևերը գամուած պահեցին, Բատ Սահառունին սուրը հանեց և անոր գլուխը կտրեց:

(29) ԼՐԱՆԴ Ք. ԱՐՄԷՆ

(Վ Ե Ր Ջ)

(3) Փաւստոս, Ե. 35: Մեսրոպ երէց՝ Վարպազատ թագաւորին Մուշեղի ըսած բառերը կուտայ այս կերպ. «... եւ Վարպազատ ասէ, գնա՛, դու հարց ցՊապ, թէ զնա վասն է՞ր ետուր ի ձեռս սպանողացն» (118):